Գիտություն

ՀՈՒՆՎԱՐ
№ 1
(290)
2016 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց
Երկար դարերով, ահեղ հարվածով.
Թեպետև էսպես ցրեց, տարածեց,
Ջգեց հողեհող, փռեց ծովեծով.

Վկա է սակայն բովանդակ Երկիր.
Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր-
Կենդանի է դեռ հայության ոգին:

Եվ թարմ աղմուկով մանկունք
մեր մատաղ
Առաջ են խաղում լուսավոր տենչով,
Եվ թնդում են դեռ հայի երգն ու տաղ
Հարազատ լեզվով, հայրենի շնչով:

Եվ իր փլատակ տների տակից
Ելնում է ահա հզոր ժողովուրդ.
Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ.
Խորունկ հայացքում մեծ կյանքի
խորհուրդ:

Ո՜վ դուք սրբազան Մասիս, Արագած,
Էդ ձեր երկնամուխ գոհար թագերով,
Եվ որ նրանցից վերև խոյացած
Փայլատակում եք լույս-պսակներով-

Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք,
Որ լցրիք Հայոց աշխարհքն ու սրտեր
Լուսավոր կյանքի սիրով երջանիկ
Ու ձգտում տվիք - ձգտել դեպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կմնաք,
Հոյակապ սյուներ հայության ոգու,
Մենք միշտ անսասան առաջ տի գնանք,
Ինչքան մեր ճամբան լինի ահարկու:

Եվ տոն կտոնենք էսպես խնդագին,
Եվ թող իմանա բովանդակ Երկիր-
Ապրում է անմեռ հայությունը հին,
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով մի շարք բնագավառներում շնորհվել են Հայաստանի Հանրապետության 2015 թ. պետական մրցանակները: Նախագահի նստավայրում տեղի ունեցավ մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

Պետական մրցանակներ են շնորհվել գրականության և արվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների բնագավառներում:

Ճշգրիտ և բնական գիտությունների բնագավառում պետական մրցանակ է շնորհվել Աշոտ Սաղյանին, Աննա Մկրտչյանին և Հայարփի Սիմոնյանին՝ «Նոր սերնդի ոչ սպիտակուցային ամինաթթուների արդյունավետ փոքրածավալ արտադրական տեխնոլոգիա» աշխատանքի համար:

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

ԻՄ ԿՐԿՆԱԿԻ ԱՐԱՐԱՏԸ

Ինձ համար յուրաքանչյուր հանդիպում իմ սիրելի Հայաստանի հետ նշանակալից իրադարձություն է: Իմ առաջին հանդիպումը եղավ հայ մեծաշուք գրականության հետ: Դա շատ վաղուց էր, ես այն ժամանակ դեռ շատ երիտասարդ էի, սակայն Ավետիք Իսահակյանի տաղաչափությունը պարուրել էր սիրտս, ինչպես խաղողի որթը իր հենարանը: Պոեզիան միշտ եղել է և այսօր էլ մնում է որպես ժողովրդի հոգու լավագույն արտահայտողը: Ժողովրդի հոգու մեջ պարուրված են նրա ազգային կյանքի և բնավորության բոլոր բաղադրիչները՝ պատմությունը, աշխարհագրական եզրագծերը, գեղագիտական ընկալումը, մարդկայնության գործակիցը և, վերջապես, նրա խառնվածքը, տեմպերամենտը: Եվ այդ ողջ հսկա համակարգը տեղավորվում է բանաստեղծական մի փոքրիկ վանդակում՝ մեկ տան մեջ: Պոեզիան ծագումնաբանական խտանյութ է: Նման փոքրիկ հատիկում զետեղվում է ամբողջ մի աշխարհ: Այդպես էի մտածում պոեզիայի մասին այն ժամանակ, այդպես եմ մտածում նաև այժմ: Իմ վերաբերմունքը պոեզիային՝ որպես ծագումնաբանական արտակարգ երևույթի, բնավ չի փոխվել: Իմ առաջին ծանոթությունը Հայաստանի հետ եղել է մեկ բանաստեղծական տան միջոցով: Եվ այդ ժամանակ նույնիսկ ես շատ բան չգիտեի Հայաստանի մասին: Իհարկե, հետագայում իմ գիտելիքները հարստացան ինֆորմացիայի մեծ քանակությամբ, սակայն առաջին, գուցեև ամենաուժգին զգացմունքը չփոխվեց, մնաց նույնը:

Ես խորամուխ եղա հայ ժողովրդի պատմության խորքերը: Եվ ինչքան խորն էի ներթափանցում նրա անտիկ դարաշրջանը, այնքան ավելի բարձր էր թվում ինձ Արարատը: Իսկ ինչքան որ բարձր էր թվում ինձ Արարատը, այդքան ուժգին էի զգում իմ հոգեկան կապը Հայաստանի հետ: Իմ սրտի ստեղծագործական ազդակները գալիս են ամենահեռավոր և ամենաարդիական դիալեկտիկայի աշխարհից: Իմ սիրտը, ինչպես խնձորը, բաժանված է երկու կեսի, մեկ կեսը սպիտակ է, իսկ մյուսը՝ կարմիր:

Հայաստանը ես հայտնագործեցի ավելի ուշ, քան Հունաստանը: Եվ փառք Աստծո, որ հասցրի այդ անել, քանի դեռ կենդանի եմ: Դա մեծ երջանկություն է: Եվ այնտեղ գտա ոչ պակաս, քան անտիկ դարաշրջանի Հունաստանում: Եթե Հայաստանը ոչինչ անգամ չունենար մեծն Նարեկացուց բացի, այդ էլ բավական էր՝ ընդունելու նրա վիթխարի ավանդը համամարդկային մշակույթի ասպարեզում: Բայց Նարեկացուց բացի՝ Հայաստանն իր փառապանծ անցյալում այնքան է ունեցել, որ դժվար է կշռել և հաշվարկել նրա ավանդը համաշխարհային մշակույթում: Կարծում եմ՝ իսկական դժբախտություն է եղել, որ ժամանակին բոլոր հաշվարկները մշակույթի բնագավառում առաջ են եկել հունա-լատինական եվրոպոիզմի բացարձակացնելուց: Իմ սերունդը դա ապրել է դեռևս դպրոցական հասակում: Այդ եվրոպականացված ֆենոմենը հիպնոսացրել և երկար ժամանակ պարուրել էր մեզ: Գիտատեխնիկական հեղափոխությունը, մեր գիտակցության մեջ «հարաբերականության տեսության» (ռելյատիվիստական) ուսմունքի ներթափանցումը և այդ տեսությունից բխող դինամիկայի, ատոմային ֆիզիկայի սրընթաց զարգացումը և մարդու՝ այդ իկարյան հետնորդի տիեզերական ընդարձակումը արթնացրեց մարդկային միտքն ընդհանրապես և մասնավորապես: Մարդկային միտքը սկսեց գործել: Եվ հանկարծ մենք գտանք այն, ինչի մասին բավական աղոտ պատկերացում ունեինք: Այժմ մեզ իր գաղտնիքն է բացում ողջ մշակույթի

➤7

Ֆինանսական զգալի միջոցների հատկացման, միջազգային համատեղ ծրագրերի, կանխարգելիչ և փրկարարական պեղումների ընդլայնման շնորհիվ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դաշտային հնագիտական հետազոտությունները վերջին տարիներին աննախադեպ ծավալների են հասել:

Կատարված հնագիտական հետազոտություններն առանձնանում են մի շարք կարևոր ձեռքբերումներով: Նախ և առաջ հարկ է արձանագրել, որ հնագիտական նոր օբյեկտների պեղումներով կուտակված նյութերն ու տվյալները մշակութաժամանակագրական նոր իրողությունների փաստագրման, նախկինում տիրապետող ժամանակագրական համակարգի վերանայման ու ճշգրտման հնարավորություն տվեցին: Ժամանակակից հետազոտությունների կարևոր առանձնահատկություններից հաջորդն անկասկած հնաչափական և հնակենսաբանական անալիզների արդյունքների՝ հայաստանյան հնագիտության համար աննախադեպ ծավալներով օգտագործման փաստերն են, ինչը թույլ է տալիս հիմնովին վերանայելու տարածաշրջանի մշակութային և բնական լանդշաֆտի մասին նախկինում տիրապետող բազմաթիվ տեսակետներ, վեր հանել հնագույն հանրությունների և բնական միջավայրի «փոխհարաբերության» իրական պատկերը՝ հնագիտական տարբեր փուլերի ու «մշակույթների» համար: Երրորդ կարևոր հանգամանքն այն է, որ սկզբունքորեն և որակապես նոր տվյալներով համալրված հնագիտական սկզբնաղբյուրներն այսօր լեռնաշխարհի հնագույն և հին հասարակությունների «դիմագիծն» արտացոլող սոցիալ-մշակութային միջավայրում նկատվող ձևափոխությունների բնութագրության, մեկնաբանության նոր հայեցակարգերի, նոր տեսակետների պահանջ են դնում:

Ոսկրե նետասլաքների հղկման գործիք Մասիս բլուրից մ.թ.ա. VI հազ. առաջին կես

Այս տեսակետից հատկապես առանձնանում են քարեդարյան Նոր Գեղի-1 բացօթյա կայանի ուսումնասիրությունները, որոնց արդյունքները հրատարակվել են «Sience» ամսագրում, քանի որ ունեն բացառիկ նշանակություն և փոխում են մեր պատկերացումները հնագույն հասարակությունների՝ Եվրասիայում տարածման մասին: Համաձայն նախկին պատկերացումների արխայիկ Homo Sapiens-ը ձևավորվելով Աֆրիկայի տարածքում մեզանից մոտ 350-300 հազար տարի առաջ և ստեղծելով քարի մշակման նոր տեխնոլոգիաներ (տվյալ պարագայում քարի ճեղքման լևալլուազյան հնարը) կարողացել է ներթափանցել Եվրասիա և տարածվել այստեղ: Նոր Գեղի-1 կայանը Աֆրիկայի սահմաններից դուրս հայտնաբերված՝ ամենահուսալի կերպով շերտագրված և հասակագրված հուշարձաններից է, որի՝ բազալտային երկու հոսքերի արանքում պարփակված նստվածքներից հայտնաբերված վանակատե առարկաները հասակագրվում են 335-325 հազար տարվա ժամանակահատվածով: Կարևորագույն դիտարկումներից մեկն էլ այն է, որ այս առարկաների մեջ մեկտեղված են ինչպես ստորին պալեոլիթի քարի մշակման աշելյան ավանդույթներին բնորոշ (ձեռքի հատիչներ), այնպես էլ միջին պալեոլիթյան ավանդույթներին (լևալլուազյան տեխնիկայով ստացված նախապատրաստուկներ) բնորոշ քարե առարկաներ: Ա-

վելին, քարե իրերի արտադրման այս երկու մեթոդների կամ մոդելների համատեղ հանդես գալու պարագայում հնարավոր է լինում բացահայտել դրանց գենետիկ կապը և մեկի՝ մյուսից ծագելու օրինաչափությունները, ինչը փաստում է, որ լևալլուազյան հնարի առաջացումը տեղական բնակչության տեխնոլոգիական էվոլյուցիայի արդյունք է և կապված չէ Աֆրիկայից արխայիկ Homo Sapiens-ի Եվրասիա ներթափանցելու հետ: Նոր Գեղի-1 կայանը կարելի է դիտարկել նաև որպես մեր տարածաշրջանում ստորին պալեոլիթից միջին պալեոլիթին անցման ժամանակագրական սահմանները բացահայտող մի սկզբնաղբյուր, ինչը ցույց է տալիս, որ դա տեղի է ունեցել մոտ 300 հազար տարի առաջ և այն ունի ավելի հին հասակ, քան Լևանտի տարածքի համանման կայանները, ինչը մեկ անգամ ևս բացառում է Աֆրիկայից «Լևանտյան միջանցքով» Հայկական լեռնաշխարհի տարածք արխայիկ Homo Sapiens-ի տարածման մասին ձևավորված պատկերացումները: Առաջավորասիական վաղ երկրագործական մշակույթների ցանկը լրացնող ինքնատիպ մշակութային համալիր է բացահայտվել Արարատյան դաշտում: Մասնավորապես Արարատյան դաշտում գտնվող Առատաշենի, Ակնաշենի, Մասիս բլուրի պեղումների և հայտնաբերված նյութերի ուսումնասիրությամբ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանների համար փաստագրվել է մ.թ.ա. VI հազ. առաջին կեսով հասակագրվող, մինչ այս անհայտ, նեոլիթի ուշ փուլերը նշանավորող հնագիտական մշակույթ: Պեղված բնակատեղիները բազմաթիվ հատկանիշներով շաղկապվելով Կուրի ավազանից, Տավրոսի հյուսիսային փեշերից, Իրանի արևմտյան շրջաններից հայտնի հուշարձանների հետ, զգալիորեն տարբերվում են դրանցից թե ճարտարապետական մնացորդների և թե գույքի տեսականու ինքնատիպ ձևերով: Վերջիններս բացառիկ տվյալներ են հրամցնում Առաջավոր Ասիայում վաղ երկրագործական հասարակությունների ձևավորման գործընթացների հետազոտության համար, վկայելով, որ քաղաքակրթության կայացման ելակետային փուլում Արարատյան դաշտում բնակվել է սոցիալական բարդ կազմ ունեցող, զարգացած տնտեսությամբ ու մշակույթով հասարակություն: Այդ են վկայում մշակութային կապերի, հումքի տարբեր աղբյուրների օգտագործման, հեռագնա անասնապահության մասին փաստող անալիզների արդյունքները:

Վաղ երկրագործական հասարակությունների հասարակական և տնտեսական կենցաղի, պատկերացումների համակարգի, տնտեսության ռեգիոնալ մասնագիտացման մասին վկայող փաստերով առանձնանում են էնեոլիթի ավարտական փուլը նշանավորող, մ.թ.ա. V հազ. երկրորդ կես-IV հազ. առաջին կեսն ընդգրկող ժամանակահատվածով հասակագրվող Արենի 1 քարայրի և Ներքին Գոդեձոր բնակավայրի պեղումները: Ուշագրավ արդյունքներ են ստացվել Արենի 1 քարայրի պեղումների շնորհիվ: Արտերկրի տարբեր լաբորատորիաներում կատարված Արենիի նյութերի անալիզների շնորհիվ հստակեցվել են էնեոլիթի վերջին փուլի ժամանակագրական սահմանները՝ մ.թ.ա. 4300-3400 թթ.: ԱՄՆ-ի և Եվրոպայի լաբորատորիաներում կատարված անալիզների համադրության շնորհիվ անվերապահորեն հաստատագրվել է, որ Արենի 1 քարայրի պղնձի-քարի դարաշրջանի շերտում բացվել է գինու արտադրության առայժմ հայտնի հնագույն համալիրը (հնձան), ինչը վկայում է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանները խաղողագործության և գինեգործության ելակետային օջախ են եղել: Ինչպես այս, այնպես էլ նախորդ տարիներին ստացված



Արենի 1: Միակտոր կաշվից պատրաստված ոտնաման մ.թ.ա. IV հազ. կես

արդյունքները ցույց են տալիս, որ լեռնաշխարհը մ.թ.ա. V հազարամյակի վերջ - IV հազարամյակի առաջին կեսին ներկայանում է խիստ զարգացած տնտեսությամբ, շրջակա աշխարհի հետ առևտրամշակութային բազմաթիվ ուղիներով կապված ինքնատիպ մշակույթով:

Հայտնաբերված և արդեն համակողմանի անալիզներով ուսումնասիրված նյութերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական հասարակությունների կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտների մասին՝ բացառիկ պահպանվածություն ունեցող արտեֆակտներով ու կենսաբանական մնացորդներով: Այս հանգամանքի շնորհիվ Արենին ներկայումս համարվում է հա- ➤3

Արենի 1: Գինու արտադրական համալիր մ.թ.ա. IV հազ. սկիզբ

Պավել ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հայկական լեռնաշխարհի և Հայոց անցյալի «Մեծ Նարրատիվն» ըստ նորահայտ հնագիտական տվյալների (Մ.թ.ա. VI-IV հազարամյակներ)

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Զավեն Մսըրլյան

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զավեն Մսըրլյանը ծնվել է 1938 թվականին Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Մխիթարյան, Լիբանանի ազգային Նուբարյան և Բեյրութի Ս. Նշան ազգային վարժարաններում, երկրորդական ուսումը ստացել է Հայ ավետարանական քոլեջում, որն ավարտել է 1955 թվականին: Հետագա կրթությունը շարունակել է Բեյրութի ամերիկյան համալսարանում՝ մասնագիտանալով համաշխարհային պատմության բնագավառում: 1963 թվականին ստացել է մագիստրոսի կոչում՝ «Հայկական ներկայացուցչությունը լիբանանյան խորհրդարանում» թեմայով աշխատանքի համար: Հետագայում այս թեման նա լրամշակեց և, շարունակելով ընտրությունների թեման, այն հասցրեց մինչև 2009 թ. ընտրությունները: Այս գիտական հետազոտությունները մաս առ մաս տպագրվեցին «Հայկազյան հայագիտական հանդես»-ում:

Այդ ընթացքում, 1960 թվականից, նա աշխատում էր Բեյրութի Հայ ավետարանական քոլեջում որպես ուսուցիչ: Նկատելով նրա աշխատասիրությունը և կազմակերպչական ունակությունները, քոլեջի ղեկավարությունը երիտասարդ ուսուցչին առաջարկեց զբաղեցնել երկրորդական բաժնի պատասխանատուի, իսկ արդեն 1967 թ. նա զբաղեցրեց տնօրենի պաշտոնը: 1991 թվականից մինչև այսօր Զավեն Մսըրլյանը Լիբանանի Հայ ավետարանական կրթական համադրող հանձնախմբի ատենադպիրն է:

Բարձր գնահատելով նրա վաստակը հայագիտության բնագավառում 1986թ. Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միությունը նրան շնորհեց ոսկե շքանշան՝ երկարատև ծառայությունների համար:

2003 թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ևս բարձր գնահատելով Զավեն Մսըրլյանի գիտակրթական գործունեությունը նրան շնորհեց ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում՝ հայագիտության բնագավառում:

Կրթության ոլորտում ունեցած նշանակալի ներդրման համար 2010 թվականի մայիսին Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Սլեյմանի, վարչապետի և կրթության նախարարի համատեղ հրամանագրով Զավեն Մսըրլյանն արժանացավ Լիբանանի Կրթության շքանշանի:

Զավեն Մսըրլյանը մի շարք մենագրությունների և բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Նրա գրչին է պատկանում «Հայկական հարցի մասին» աշխատությունը, որը տպագրվել է Բեյրութում, 1978 թվականին և արժանացել ԹՄՄ Հայկաշեն Ուզունյան մրցանակին: 1979 թ. նա հրատարակեց «Երեք դաշնագրեր» գիտական աշխատությունը: 1981 թ. տպագրվեց «Մկրտիչ Մսըրլանի ազգային-քաղաքական գործունեությունը», 2001 թ. Անթիլիասում՝ «The Premeditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians» աշխատանքները: Վերջին աշխատանքն արժանացավ Գրիգոր Մելիտենեցի մրցանակին: 2010 թ. Բեյրութում լույս տեսավ նրա «Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը և Հայկական հարցը 1900-2009 թվականներին» մենագրությունը:

Զավեն Մսըրլյանը հեղինակ է 90-ից ավել գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել «Հայկազյան հայագիտական հանդես»-ում, «Հասկ Հայագիտական» տարեգրքում, «Armenian Studies», «Շիրակ», «Կամար», «Զարթոնք», «Արարատ», «Նոր օր», «Ազդակ-Երկիր» և «Խոսնակ» պարբերականներում:

Զավեն Մսըրլյանը նաև մի շարք խմբագրական խորհուրդների անդամ է: 2004 թվականից առ այսօր Զավեն Մսըրլյանը Մեծի Տանն Կիլիկիոյ «Ռիչրդ և Թինա Քարոլան» հրատարակչական ֆոնդի ատենապետն է: Նա եղել է Վարդան Մատթեոսյանի «Հարավային կողմն աշխարհի» (Անթիլիաս, 2005) և Հակոբ Չոլաքյանի «Անտիոքի մերձակա ռուճի հովիտի հայերը» (Անթիլիաս, 2006) գրքերի խմբագիրը:

Նա գիտական զեկույցներով հանդես է եկել Բեյրութում, Լոնդոնում, Նյու Յորքում, Բոստոնում, Չիկագոյում և Լոս Անջելեսում: Նրա զեկույցների թեման հիմնականում Ցեղասպանության և Հայոց պահանջատիրության հարցերի քննությունն է: 1970-2006 թվականներին բազմաթիվ անգամ նախաձեռնել է հայկական վավերագրական ցուցահանդեսների կազմակերպում ողջ աշխարհով մեկ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդը գնահատելով դոկտ. Զ. Մսըրլյանի ազգային, կրթական, պատմագիտական և հասարակական գործունեությունը 2007 թվականին Հայրապետական կոնդակով նրան շնորհեց Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշանը: Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա-ն Հայրապետական կոնդակով 2014-ին Զավեն Մսըրլյանին պարգևատրեց «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Զավեն Մսըրլյանը շուրջ 50 տարի մեծ նվիրումով զբաղվում է ազգային, հասարակական, գիտակրթական ու հայագիտական հարցերով: Նրա ուսումնասիրությունների առանցքը եղել են Հայոց պատմությունը, Ցեղասպանության խնդիրները, Հայ դատը:

Հայաստանի Հանրապետությունում ևս բարձր են գնահատել Զավեն Մսըրլյանի գործունեությունը: 2011 թվականին Հայաստանի Հանրապետութեան կրթության և գիտության նախարարությունը նրան շնորհեց շքանշան, իսկ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Զավեն Մսըրլյանին շնորհվեց «Մովսես Խորենացի» շքանշան:

Հաշվի առնելով Զավեն Մսըրլյանի գիտական վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2014 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Զավեն Մսըրլյանն այսօր էլ մեծ ջանքեր է ներդնում հայագիտության, Հայ դատի ոլորտում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտքարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայկական լեռնաշխարհի...

➤ 2

ռավարևմտյան Ասիայի՝ քաղաքակրթության նախաշեմին գտնվող հասարակությունների ուսումնասիրության բացառիկ օբյեկտ:

Տարածաշրջանի վաղ երկրագործական հասարակությունների սոցիալ-մշակութային միջավայրի բնութագրության համար խիստ ուշագրավ տվյալներ են փաստագրվել էնեոլիթի ավարտական փուլը նշանավորող Ներքին Գոդեձոր բնակավայրում (շուրջ մ.թ.ա 3600-3400 թթ.): Գոդեձորի էնեոլիթյան հորիզոնների առանձնահատկությունները, փայտյա ճարտարապետությունը թույլ են տալիս ասելու, որ գործ ունենք ժամանակավոր մի բնակատեղիի հետ, որը բնակեցվել է պարբերական ընդհատումներով: Ուսումնասիրված ոսկրաբանական նյութը ցույց է տալիս, որ գոդեձորյան ֆաունայի բացարձակ մեծամասնությունը՝ մոտ 90%-ը, ներկայացված է ընտանի կենդանիներով, որոնց մեջ գերակշռում են մանր եղջերավորների (ոչխար և այծ) ոսկորները՝ ավելի քան 60%-ը: Հատկանշական է, որ խոշոր եղջերավորների ոսկորների մեջ հանդիպում են դեֆորմացված օրինակներ, ինչը խոսում է այն մասին, որ այս կենդանիներն օգտագործվել են որպես բեռնակիր: Ոսկրաբանական նյութերի 10%-ը պատկանում է լեռնային, տափաստանային և անտառային միջավայրերին բնորոշ վայրի կենդանիներին:

Գոդեձորից հայտնաբերված ոսկրե և կավե գործիքների մեծ մասը ակնհայտորեն շաղկապվում է բրդի մշակման և մանածագործության հետ: Մանր իրերի թվում պետք է նշել կավե դրոշմների օրինակները, որոնք ըստ երևույթին խոսում են որոշակի ապրանքատեսակների վերահսկվող շրջանառության մասին:

Գոդեձոր: Ոսկրե գործիք մ.թ.ա. IV հազ. կես

Հուշարձանի տեղադրությունը լեռնային գոտում, կարևորագույն ճանապարհների խաչմերուկում գտնվելը, սեզոնային բնակեցման մասին վկայող ճարտարապետությունը, մանր եղջերավոր անասունների բուծման գերակայությունը, խոշոր եղջերավորներին, որպես բեռնակիր օգտագործելու, բրդի մշակման և մանածագործության մասին վկայող փաստերը, Ուրմիայի ավազանի հուշարձաններին բնորոշ ներմուծված խեցեղենի մեծ քանակը խոսում են այն մասին, որ այստեղ ունենք մոբիլ երկրագործ-անասնապահների սեզոնային բնակատեղի, որի բնակիչները հիմնականում զբաղվել են ոչխարաբուծությամբ, բրդի մշակումով և մանածագործությամբ: Ձեռք բերված տվյալները թույլ են տալիս ասելու, որ այս հանրությունը տարվա կեսն ապրել է Որոտանի ափերին, ցուրտ ամիսներին տեղափոխվել Ուրմիայի հարավային ափեր՝ ամենայն հավանականությամբ Սոլդուզի հովիտ: Հարկ է նշել նաև, որ Արենիի և Գոդեձորի տվյալները թույլ են տալիս խոսելու ոչ միայն միջռեգիոնալ մշակութային կապերի, առևտրի, այլև տարածաշրջանում տնտեսության որոշակի ոլորտներում մասնագիտացված համայնքների առկայության, միջռեգիոնալ ինտեգրացիոն գործընթացների մասին:

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՍՈՑԻՈԼՈԳԸ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ա. Պողոսյանի 65-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի սոցիոլոգ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ, ակադեմիկոս Գևորգ Արամի Պողոսյանի 65 տարին:

Գ. Պողոսյանը դպրոցն ավարտելուց հետո 1968 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, որն ավարտել է 1974 թ.: 1977 թ. աշխատանքի է անցել ՀԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի սոցիոլոգիական ուսումնասիրությունների բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1983 թ. Մոսկվայում միութենական գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաստելիության հիմնախնդիրը» խորագրով՝ նվիրված սոցիոլոգիայի մեթոդաբանական հիմնախնդիրներին:

1985 թ. նշանակվել է Հայաստանի ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, այնուհետև՝ 1990 թ., սոցիոլոգիական հետազոտությունների բաժնի վարիչ և ապա՝ տնօրենի տեղակալ: Մինչև 1995 թ. ղեկավարել է գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում նորաստեղծ Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը: 1996 թ. միաժամանակ զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնը: 1997 թ. Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը միավորվել է փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտին և 2003 թ. վերանվանվել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ:

1988 թ.՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո, Գ. Պողոսյանի ղեկավարած սոցիոլոգիական հետազոտությունների բաժինը սկսեց մշակել աղետների սոցիոլոգիան որպես նոր գիտական ուղղություն, որն առաջինն էր և այդ ժամանակ միակը Խորհրդային Միությունում: 1991 և 1993 թթ. Գ. Ա. Պողոսյանը մի քանի ամսով գործուղվել է ԱՄՆ-ի տարբեր համալսարաններ, իսկ 1994-1995 թթ. Ֆուլբրայթի հիմնադրամի մրցութային ծրագրով տասը ամսով հրավիրվել է աշխատելու ԱՄՆ-ի Դելավեր նահանգի համալսարան, Աղետների ուսումնասիրության կենտրոնում: Նրա ղեկավարած խմբի սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները տպագրվեցին առանձին մենագրություններում:

Գևորգ Պողոսյանը 1990 թ. հիմնադրել է Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան որպես ինքնուրույն կազմակերպություն, որը 1991 թ. ընդունվեց Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի կազմում՝ որպես ազգային անդամ, իսկ 2006 թ.՝ նորաստեղծ Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիայի անդամ: Նրա շնորհիվ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան գիտական համագործակցություն է հաստատել և հետազոտություններ իրականացրել խոշոր միջազգային կազմակերպությունների հետ:

Գ. Պողոսյանը 1995–1998 թթ. մասնակցել է Ժնևում (Շվեյցարիա) ՄԱԿ-ի փախստականների հարցերով բարձրագույն հանձնակատարի ամենամյա համաժողովների աշխատանքներին՝ ազգային փորձագիտական խմբի կազմում: Նա 1994-1995 թթ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի համար ղեկավարել է «Կանանց իրավիճակը Հայաստանում» ազգային զեկույցի սոցիոլոգիական ուսումնասիրության և վերլուծական զեկուցագրի պատրաստման աշխատանքները: Իսկ 1996–1997 թթ., որպես ազգային փորձագետ, ղեկավարել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Մարդկային զարգացում-1997» հայաստանյան զեկույցի մշակումն ու տպագրումը. Human Development National Report. Armenia – 97, Yerevan, 1997 (Gevork Pogosian Editor; in English and Armenian): 1996–2000 թթ. Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի կազմում Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) աջակցությամբ նա Երևանում հիմնել է փախստականների ու միգրանտների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին աջակցող ռեսուրսային կենտրոն:

2003 թ. Գ. Պողոսյանը՝ առաջինը նորանկախ հանրապետությունում, պաշտպանել է սոցիոլոգիայի ասպարեզում դոկտորական թեզ՝ «Սոցիալական տրանսֆորմացիաների տեսությունն ու գործառնությունը Հայաստանում» խորագրով՝ նվիրված Հայաստանում անցումային շրջանի սոցիոլոգիական հիմնախնդիրներին: Անկախ պետականության վերականգնումից հետո հայ հասարակության փոխակերպման գործընթացներին նվիրված երկար տարիների հետազոտությունները ստացան իրենց ընդհանրացումը Գ. Ա. Պողոսյանի բազմաթիվ հոդվածներում և հիմնարար մենագրություններում՝ Погосян Г. «Армянское общество в трансформации». Ереван, 2003; Погосян Г. «Современное армянское общество: особенности трансформации». Москва, «Академия», 2005; Պողոսյան Գ. «Հայ հասարակությունը XXI դարասկզբին», Երևան, 2006, Պողոսյան Գ., Հարությունյան Մ., Առաքելյան Վ. «Հայաստան. Օտարացած հասարակություն», Երևան, 2007, Poghosyan G. "Armenian Society in Transition" – 39-th World Congress " Sociology at the Crossroads" of the International Institute of Sociology, Yerevan, 2009; Poghosyan G. Modernization of Sociology in Post-Soviet Armenia.

– In "Facing An Unequal World. Challenges for a Global Sociology". Volume II, Academia Sinica, Taiwan, 2010, pg. 126–132; «Армянский транзит». Сборник статей (ред. и автор Г. Погосян), Ереван, 2009.

Վերջին մեկուկես տասնամյակում Գ. Պողոսյանի գիտական գործունեությունը նվիրված է Հայաստանում կարևորագույն խնդիրներից մեկի՝ արտագաղթի սոցիոլոգիական ուսումնասիրություններին, որոնք նույնպես ստացան իրենց ընդհանրացումը նրա բազմաթիվ հոդվածներում և հիմնարար մենագրություններում՝ Migration Processes in Armenia, Ed. G. Poghosyan. (Second edition), Yerevan, Noyan Tapan, 2003, 195 էջ.; Погосян Г. А. Анализ миграционных потоков в Армении. — В кн.: Транзитная миграция и транзитные страны: теория, практика и политика регулирования. Москва, 2009, с. 196—213; Погосян Г. А. Эволюция национального самосознания в постсоветских обществах. — В кн.: Национальное самосознание народов стран СНГ и Балтии: роль общих культурных основ. Москва, «Прогресс-Традиция», 2010; Poghosyan G. (Editor), Art Education in Armenia: Building Creative Capacities for XXI Century. National Report for UNESCO, Yerevan, 2010; Poghosyan G. Out-Migration from Armenia. – In "Transboundary Migration in the Post-Soviet Space". Three Comparative Case Studies. N. Genov, T. Savvidis (eds.), Peter Lang, Berlin, 2011; Gevorg Poghosyan. Armenian Migration, Yerevan, Europrint, 2014.

Երկար տարիների գիտական աշխատանքի ընթացքում նա տպագրել է 45 գիրք ու մենագրություն և 180-ից ավելի գիտական հոդվածներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն, հունգարերեն և ուկրաիներեն լեզուներով:

Գ. Պողոսյանը մասնակցել է բազմաթիվ խոշոր միջազգային սոցիոլոգիական ծրագրերի՝ որպես ազգային փորձագետ ՀՀ-ից: Նրա բազմաթիվ միջազգային կապերը հնարավորություն են տվել ներկայացնել հայկական սոցիոլոգիական գիտությունը ամենահեղինակավոր գիտական հարթակներում: Նրա ջանքերով սոցիոլոգիան ձևավորվել է մեր հանրապետությունում որպես լուրջ գիտական ուղղություն: Նրա գիտական ու հասարակական գործունեությունը քաջ հայտնի է ոչ միայն Հայաստանում ու Հարավկովկասյան տարածաշրջանում, այլ նաև՝ տարածաշրջանի սահմաններից դուրս: Իր գիտական կապերի շնորհիվ նա մասնակցում է միգրացիայի, տրաֆիքինգի, ժողովրդավարության զարգացման և հասարակության փոխակերպման հարցերին նվիրված խոշոր միջազգային ծրագրերին: Գ. Պողոսյանը մասնակցել է 6 համաշխարհային սոցիոլոգիական կոնգրեսների և զեկուցումներով հանդես եկել ավելի քան 65 միջազգային գիտաժողովներում, որոնք տեղի են ունեցել 45 տարբեր երկրներում:

Գ. Պողոսյանն ընտրվել է բազմաթիվ միջազգային մասնագիտական կազմակերպությունների և ակադեմիաների անդամ, մի քանի հեղինակավոր գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ, այդ թվում՝ «Социологические исследования», 1996, (Մոսկվա), «Вопросы философии», 2015 (Մոսկվա), «Мониторинг общественного мнения», 2013, ВЦИОМ (Մոսկվա), «Социальная политика и социология», РГСУ, 2014 (Մոսկվա), «Интеллект, Личность, Цивилизация», 2013 (Ուկրաինա, Կիև), "Global Sociology", 2014 (Հնդկաստան), ՀՀ ԳԱԱ «Բանբեր հայագիտության» (2014), ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Կանթեղ» (2014):

Ակադեմիկոսը մեծ ուշադրություն է հատկացնում երիտասարդ մասնագետների պատրաստման խնդրին, 2009 թվականից դասավանդում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ վարելով «Սոցիոլոգիա» և «Միգրացիոն գործընթացներ» ուսումնական դասընթացները: Երկար տարիներ հանդիսացել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության, հոգեբանության և իրավաբանական ֆակուլտետների գիտական խորհուրդների անդամ, ինչպես նաև փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի անդամ:

2008–2010 թթ. նա ղեկավարել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտին կից 062 մասնագիտացված խորհուրդը՝ քաղաքագիտության և սոցիոլոգիայի գծով: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են երկու դոկտորական և ութ թեկնածուական ատենախոսություններ:

Ակադեմիկոս Գ. Պողոսյանը ակտիվորեն մասնակցում է հանրապետության հասարակական ու քաղաքական կյանքին: 2007–2011 թթ. նա նշանակվել է ՀՀ նախագահին կից «Մարդասիրական արժեքների տարածման համար» ամենամյա մրցանակաբաշխության հանձնաժողովի նախագահ, իսկ 2011–2012 թթ.՝ ՀՀ նախագահին կից հումանիտար գիտությունների հանձնաժողովի նախագահ: 1992–1994 թթ. ընդգրկվել է ՀՀ նախագահին կից գիտության և տեխնիկայի խորհրդի անդամ և ապա՝ 1996–1998 թթ., ՀՀ վարչապետին կից գիտության ու առաջատար տեխնոլոգիաների խորհրդի անդամ: 1993–1994 թթ. Գ. Ա. Պողոսյանը համատեղության կարգով աշխատել է որպես ՀՀ վարչապետի խորհրդական:

2006 թ. Գ. Ա. Պողոսյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2007 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում, իսկ 2014 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: 2011 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ է: Նա գիտության փորձառու կազմակերպիչ է, ինստիտուտի կոլեկտիվի կողմից սիրված ու հարգված ղեկավար, ինչպես նաև հանրապետությունում ակտիվ, աչքի ընկնող հասարակական գործիչ, ճանաչված գիտնական ու միջազգային փորձագետ: Նրա գործունեությունը, որպես գիտնականի և գիտության կազմակերպչի, բազմիցս բարձր գնահատականների է արժանացել գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության և Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, ինչպես նաև հանրապետության հասարակության և ղեկավարության կողմից:

1982 թ. Հայաստանի ԳԱ նախագահության կողմից արժանացել է «Գովեստագրի», 2005 թ. ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից «Շնորհակալագրի», Ամերիկյան կենսագրական ինստիտուտի (ABI) կողմից 1997 թ., 1999 թ., 2005 թ. ճանաչվել է «Տարվա մարդ», Բրիտանական Միջազգային կենսագրական կենտրոնի (IBC) կողմից 2001 թ. արժանացել է "Outstanding Scholars of the 21st Century" կոչմանը: 2008 թ. արժանացել է Ֆրիտյոֆ Նանսենի անվան միջազգային ոսկե մեդալի, 2011 թ.՝ ՀՀ Մովսես Խորենացու անվան մեդալի:

Գևորգ Պողոսյանը ճանաչված ու սիրված գիտնական է ոչ միայն ակադեմիական շրջանակներում, այլ նաև ողջ հանրապետությունում և արտասահմանում: Նրա հեղինակավոր կարծիքը սոցիալ-քաղաքական երևույթների և գործընթացների վերաբերյալ տարիներ շարունակ գրավել է հանրության ուշադրությունը: Նա արդարացիորեն համարվում է գիտական սոցիոլոգիայի զարգացման հիմնադիրը Հայաստանում: Ցանկանում ենք նրան քաջառողջություն ու բազում նորանոր հետազոտություններ և աշխատություններ:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ 2015թ. նոյեմբերի 10-11-ը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանը՝ նվիրված հայ իրապաշտական գեղանկարչության ականավոր ներկայացուցիչ Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ինչպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախների՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի, Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, այնպես էլ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի ասպիրանտները:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ *Արարատ Աղասյանը*. **«2015 թվականը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Երիտասարդություն և ցեղասպանություն, կարծես անհամատեղելի հասկացություններ են, այդ պատճառով որոշվեց տասներորդ նստաշրջանը նվիրել մեր ականավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին: Դա էլ խորհրդանշական էր՝ այսպես համընկան ցեղասպանության 100-ամյակը և նրա ծննդյան 150-ամյակը: Քանի որ Թերլեմեզյանը հայ ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից էր, Վանի հերոսամարտի ղեկավարներից, ուստի նրա ստեղծագործությունը, նրա կյանքը, անունը նույնպես կապվում են ցեղասպանության հետ»: Ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի Կոմպոզիտորների միության նախագահ** *Արամ Սաթյանը*, **ով, շնորհավորելով տասներորդ նստա-շրջանի բացման կապակցությամբ, նշեց, որ նստաշրջանի գործունեությունը դա ճանապարհ է հասկանալ, թե ինչ է կատարվում մեր արվեստում: «Գիտությունը և ստեղծագործական գործունեությունը պետք է զուգահեռ գնան, ժամանակ առ ժամանակ իրար բախվելով. եթե չկա առողջ քննադատություն, ապա չկա լավ արվեստ»:**

Երկօրյա նստաշրջանի չորս նիստերի ընթացքում ընթերցվեց 37 զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր. կերպարվեստագիտություն, երաժշտագիտություն, թատերագիտություն, ճարտարապետության պատմություն և կինոգիտություն:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ: **«Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործական դիմանկարը» զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու** *Մերի Կիրակոսյանը*: **ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու** *Մարտին Հարությունյանը* **«Երևանի Մեսրոպ Մաշտոցի պողոտայի և դրա հարակից շինությունների արտաքին ձևավորումներն ու խնդիրները» բանախոսությամբ:**

«Լևոն Թութունջյանի արվեստը. համեմատական վերլուծություն» զեկուցում «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի աշխատակից *Իրինա Գարասեֆերյանն* **անդրադարձավ ֆրանսահայ արվեստագետ Լևոն Թութունջյանի տարբեր տեխնիկաներով կատարված ստեղծագործություններին: Վան-Վասպուրականի զարդահամալիրի գեղարվեստական լուծումների և ոճապատկերային առանձնահատկությունների թեման արծարծեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի հայցորդ** *Անի Մխիթարյանը*: **ԵՊՀ դասախոս, արվեստագիտության թեկնածու** *Հռիփսիմե Վարդանյանի* **զեկուցումը Ռուդոլֆ Խաչատրյանի վաղ շրջանի իրապաշտական ստեղծագործությունների մասին էր: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ** *Նարե Նադարյանը* **«Խաչատուր Իսկանդարյանի խմբաքանդակները» զեկույցում վերլուծեց քանդակագործի պլաստիկական տարբեր եղանակներով կատարված, կոմպոզիցիոն-տարածական ազատ դասավորությամբ գործերը: Մատենադարանի թիվ 9422 Ավետարանի մանրանկարների նկարազարդումների ոճին էր վերաբերում ԵՊՀ դասախոս, արվեստագիտության թեկնածու** *Սաթենիկ Չուգասզյանի* **զեկուցումը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ** *Սոնա Հակոբյանը* **ներկայացրեց «Հայոց Մեծ եղեռնի ազդեցությունը Փոլ Կիրակոսյանի կյանքում և արվեստում» թեման: «TRIADA ստուդիան որպես հայկական արդի համակարգչային գրաֆիկական դիզայնի բազմակողմանի ու վառ դրսևորումներից մեկը» բանախոսությամբ հանդես եկավ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ** *Արտակ Աղլամազյանը*: **ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի հայցորդ** *Մարիա Լազարևան* **ներկայացրեց «Երկնային մարմինների պատկերումը հայկական լեռնաշխարհի բրոնզե գոտիներում» թեման: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու** *Մանե Մկրտչյանն* **անդրադարձավ Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի պատմությանը, թանգարանային հավաքածուին և ներկայիս գործունեությանը: «Հակոբ Պարոնյանի «Բաղդասար աղբար»-ը Արա Բեքարյանի աչքերով» բանախոսությամբ ներկայացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող** *Շուշանիկ Մուրադյանը*: **Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի գիտական քարտուղար** *Անի Գրիգորյանն* **ամփոփ ներկայացրեց Պալյան ճարտարապետական գերդաստանի նորահայտ արխիվային նյութերը: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ** *Անի Աճառյանի* **զեկուցումը նվիրված էր Երևանի «Հաղթանակի» թանգարանի ինտերիերի դիզայնին:**

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ: **«Կոմպոզիտորկատարող հարաբերությունները երաժշտական մեկնաբանության համատեքստում» բանախոսությունը ներկայացրեց Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի տնօրեն, արվեստագիտության թեկնածու** *Սարգիս Բալբաբյանը*: **ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահի տեղակալ, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Արտեմյանը «Վահրամ Բաբայանի «Pro e Contra» դաշնամուրային պիեսի կոմպոզիցիոն առանձնահատկությունների և կատարողական մեկնաբանման շուրջ» զեկուցման մեջ վերլուծեց ստեղծագործության տեխնիկական հիմքերի առանձնահատկությունները: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն** *Նիկոլայ Կոստանդյանը* **գիտական շրջանառության մեջ դրեց դաշնակահարուհի, երաժշտագետ Մարգարիտ Բաբայանի հուշերը Տարոնի սոխակ Արմենակ Շահմուրադյանի մասին: «Ռոք երաժշտության էկոհոգեբանական առանձնահատկությունները» զեկուցման մեջ Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն** *Էդգար Գյանջումյանը* **ներկայացրեց երաժշտական տեզաուրուսի ձևավորման տեսանկյունից բխող առանձնահատկությունները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու** *Գայանե Ամիրաղյանը* **հանդես եկավ «Հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ հնդկահայոց ավանդույթի որոշ ձայնեղանակային առանձնահատկությունների շուրջ» զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ** *Սոնա Մակարյանը* **առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց մի շարք արխիվային վավերագրեր: «Երաժշտության հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» թեման ներկայացրեց Երևանի պետական կոնսերվատորիայի ասպիրանտ** *Դավիթ Մելքոնյանը*: **Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ** *Սոֆյա Ղազարյանն* **անդրադարձավ Կոմիտասի՝ մանուկների համար գրված երաժշտության սակավ հայտնի էջերին: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու** *Տաթևիկ Շախկուլյանը* **«««Սասունցի Դավիթ» էպոսի երգվող հատվածների մեղեդիական ուրվագծերը» բանախոսության շրջանակում ներկայացրեց էպոսի երգվող հատվածների հետազոտությունն ըստ նորագույն տեխնոլոգիաների վերլուծությունների: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող** *Լիլիթ Հակոբյանն* **անդրադարձավ Նիկոլ Գալանտերյանի երրորդ՝ «Հովիվը», օպերային և կարևորեց վերջինիս բեմադրության հարցը: Իրանի երաժշտական մշակույթի համատեքստում հայ կոմպոզիտորների ստեղծագործության մասին էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ** *Շուշան Այվազյանի* **զեկուցումը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ** *Մարիաննա Պողոսյանը* **ներկայացրեց Հայաստանում կիթառային դպրոցի հիմնադիր, կոմպոզիտոր Էդուարդ Բաղալյանի ստեղծագործական դիմանկարը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի** *Ասղար Ջանաբի Վահաբը* **հանդես եկավ «Երաժշտությունը Ֆիրդուսու «Շահնամե» պոեմի նկարագրություններում» զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի հայցորդ** *Արմինե Աթոյանը* **վերլուծեց Մարտուն Իսրայելյանի «Սիրո և տրտմության խոսքեր» խմբերգաշարը երկսեռ երգչախմբի համար (a cappella, խոսք՝ Վահան Տերյանի):**

ԹԱՏՐՈՆ ԵՎ ԿԻՆՈ: **ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի կրտսեր գիտաշխատող** *Անուշ Ասլիբեկյանը* **«Դրությունը որպես ձևային հիմք Վիլյամ Սարոյանի «Պինգ պոնգ խաղացողները» փոքր դրամայում» բանախոսության մեջ շոշափեց հեղինակի փոքր թատերախաղերը դրության և ներքին դրամատիկական ձևի տեսանկյունից: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու** *Արսեն Համբարձումովը* **դիտարկեց Ա.Վերնոյի «Մայրիկ» (1991), Ա.Էգոյանի «Արարատ» և Տավիանի եղբայրների «Արտույտների ագարակը» (2007) ֆիլմերը:**

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: **«Էջմիածնի Շողակաթ եկեղեցու վաղ միջնադարյան հորինվածքի վերակազմությունը» զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու** *Արեգ Հասրաթյանը*: **Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հուշարձանների չափագրության և ախտորոշման լաբորատորիայի վարիչ, ճարտարապետության թեկնածու** *Դավիթ Նահատակյանի* **զեկուցման թեման էր «Քար- աղյուս համադրությամբ որմնաշարերը IX-XIII դդ. հայկական պաշտամունքային ճարտարապետության մեջ»: «Տեղ գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցին» բանախոսության շրջանակներում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու** *Հրանտ Հովսեփյանն* **անդրադարձավ եկեղեցու ծավալատարածական հորինվածքին, հարդարանքի նկարագրությանը և վերլուծական ուսումնասիրությանը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտ, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի** *Սառա Մալեք Մոհամմադիի* **զեկուցումը Թեհրանի թատերական կոմպլեքսի ճարտարապետության մասին էր:**

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ *Աննա Ասատյանը*:

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և կառուցողական հարցադրումների առողջ մթնոլորտում: Առաջիկայում զեկուցումները կհրատարակվեն գիտական ժողովածուի տեսքով:

Նստաշրջանի շրջանակներում 2015թ. նոյեմբերի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների տան դահլիճում տեղի ունեցավ «Փանոս Թերլեմեզյանի սիրելի կոմպոզիտորները» խորագրով համերգը:

Համերգը վարեց և ներածական ընդգրկուն խոսքով հանդես եկավ *Աննա Ասատրյանը*:

Մերի ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
ավագ գիտաշխատող

Հայ կրթաշխարհի երևելիներից մեկը

Գուրգեն Էդիլյանի ծննդյան 130-ամյակի առթիվ

Վաստակաշատ գիտնական, մանկավարժ ու հոգեբան, ճանաչված մեթոդիստ ու դասագրքերի հեղինակ, պրոֆեսոր Գուրգեն Էդիլյանը ծնվել է 1885 թ. դեկտեմբերի 25-ին նախկին Ղազախի շրջանի Քարվանսարա գյուղում (այժմ՝ Իջևան քաղաք): 1892-ին ընդունվում է տեղի ծխական դպրոցը: Այնուհետև ուսումը շարունակում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա՝ ընդունվում Վաղարշապատի Գևորգյան ճեմարան, որն ավարտում է 1903 թ.: 1904-ին մեկնում է Գերմանիա, ընդունվում Ենայի համալսարանը: Այնուհետ տեղափոխվում է Լայպցիգ, հետո էլ՝ Շվեյցարիա, ընդունվում Բեռնի համալսարանը: 1909 թ. գերմաներեն պաշտպանում է դոկտորական թեզ՝ ստանալով փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան. ատենախոսությունն արժանանում է գերմանական մանկավարժական մամուլի բարձր գնահատանքին:

Գիտելիքների վիթխարի պաշար ամբարած գիտնական-մանկավարժը վերադառնում է հայրենիք՝ անմնացորդ նվիրվելու մատաղ սերնդի կրթության ու դաստիարկության գործին. նա իր ազգանվեր առաքելությունն սկսում է հարազատ կրթջախից՝ Գևորգյան ճեմարանից: Էդիլյանն իր գործընկերների հետ վերակազմում է դասավանդվող առարկաների ծրագրերն ու դասագրքերը, փոփոխություններ մտցնում նաև ուսումնական ծրագրերում, ուսումը սերտորեն կապում կյանքին: Հոգևոր կրթջախում նրան աշակերտած Պ. Ստմնիկյանը վկայում է, որ Էդիլյանի դասախոսություններն ուղեկցվում էին դիապոզիտիվների ուղեկցությամբ, ինչն այդ ժամանակ բացառիկ երևույթ էր Վաղարշապատում:

Ճեմարանում, դասատվությանը զուգընթաց, Էդիլյանը շարունակում է գիտական գործունեությունը՝ աշխատակցելով «Արարատ» հանդեսին, հոդվածներ տպագրելով ուսուցման դիդակտիկական սկզբունքների, առարկաների դասավանդման նորագույն մեթոդների վերաբերյալ: Նրա աշխատություններից 1913-14 թթ. լույս են տեսնում «Դասավանդման ձևեր», «Դասավանդման գիտության և դպրոցական պարապմունքների խնդիրները», «Դպրոցական կյանք», «Գաղափարները դպրոցում», «Մանկավարժական գրականություն և կյանքը» և այլ գործեր: Այդ տարիներին հայերեն լույս է տեսնում նաև նրա դոկտորական ատենախոսությունը՝ «Քննադատություն Հերբարտ-Ցիլլերյան ձևական աստիճանների», որը դեռ 1909-ին հրատարակվել էր գերմաներեն: Մանկավարժական գործի մեծ գիտակը խստորեն քննադատում է ժամանակի հայտնի գերմանացի մանկավարժ Հերբարտի և նրա աշակերտ Ցիլլերի մշակած ուսուցման մի մեթոդ, ըստ որի՝ դպրոցում դասավանդվող բոլոր առարկաները պետք է ուսուցանվեին միևնույն եղանակով՝ պահպանելով ուսուցման 5 աստիճանները: Այս ուսմունքում անտեսվում էին սովորողների տարիքային առանձնահատկությունները, իսկ ուսուցիչը զրկվում էր ստեղծագործական աշխատանքից. ճեմարանում դասավանդումն սկսվում է նոր մեթոդներով:

1914-ին ուսուցչապետը հրավիրվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց: Այստեղ ևս փայլում է Էդիլյան մանկավարժը: Անխոնջ հետազոտողը շարունակում է գիտական գործունեությունը՝ զբաղվելով նաև հայ մանկավարժության պատմության հարցերով. հիշատակելի է մեծանուն մանկավարժ Սեդրակ Մանդինյանի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատությունը:

1916 թ. ստանձնելով Կովկասի գաղթականական որբանոցների տեսչի պաշտոնը՝ Էդիլյանը հոգ է տանում որբերի հագուստի, սննդի և կրթության համար: Նա ուսուցման ու դաստիարակչական աշխատանքների նոր պլաններ ու ծրագրեր է կազմում: Մանկավարժը դեմ էր այն կարծիքին, թե մանկատների սաներին համակարգված կրթություն պետք չէ, նրանց գրաճանաչությունն էլ հերիք է. պետք է տալ տարրական գիտելիքներ ու միայն արհեստներ սովորեցնել: Մանկավարժական գործի եռանդուն կազմակերպիչը հրատարակում է որբանոցներում կատարվող կրթադաստիարակչական աշխատանքներին նվիրված «Գաղթականական որբանոցներ» զեկուցագիրը, որում տրված են մեթոդամանկավարժական ցուցումներ, առաջարկված են կրթության և դաստիարակության եղանակներ ու մեթոդներ, ընդգրկված են մանկավարժների և դաստիարակների խնդիրներն ու պարտականությունները:

1919-ին Հայաստանի նորաստեղծ Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարությունը նրան է վստահում տարրական դպրոցների բաժնի վարիչի պարտականությունները. փորձված մանկավարժը ձեռնամուխ է լինում նոր ծրագրերի ու դասագրքերի ստեղծմանը: 1920 թ. Գուրգեն Էդիլյանը դառնում է ժողովրդական համալսարանի (Երևանի պետական համալսարան) հիմնադիր դասախոսներից մեկը՝ ստանձնելով մանկավարժական ֆակուլտետի դեկանի պարտականությունները: 1922-ին գործուղվում է Գյումրի՝ Ամերկոմի որբանոցների վերատեսչի պաշտոնով: 1925-26 թթ. դպրոցական տեսչի պաշտոնով գործուղվում է Ստեփանակերտ: 1926-ին Արցախից վերադառնում է Խորհրդային Հայաստան, որտեղ նախ՝ աշխատանքի է անցնում մանկավարժական ուսումնարանում, ապա՝ կրկին հրավիրվում պետական համալսարան: 1934 թ., իբրև մանկավարժության և հոգեբանության պրոֆեսոր, աշխատանքի է հրավիրվում վերաբացված մանկավարժական ինստիտուտ. այստեղ աշխատում է մինչև 1937 թ.: Խորհրդային Հայաստանում նա գրում է բազմաթիվ աշխատություններ. դրանցից են (1927-30 թթ.)՝ «Դպրոցական շենք», «Ուղղագրության ուսուցման մեթոդիկա», «Լեզվի ուսուցման մեթոդիկա». աշխատություններ, որոնցով հիմք դրվեց մայրենիի համակարգված դասավանդմանը:

Գրականագետ, թատերագետ Ռուբեն Զարյանը «Հուշապատում» գրքի 3-րդ հատորում, խոսելով իր դասախոսի մասին, հիշատակում է նրա՝ աշակերտներին տված խորհուրդները. որոնցից են՝ ինչի մասին էլ խոսելիս լինեք, եթե դա զրույց չէ, աշխատեք ձեր առարկայից չշեղվել, չշեղվել քննության առարկայից: Հետևեք, որ ձեր ասելիքը ձևակերպելիս յուրաքանչյուր բառը ծառայի մտքին, նրա բացահայտմանը: Դաստիարակեք ձեր միտքն այնպես, որ ավելորդ, պարապ բառեր չլինեն: Ամեն մի բառ իր տեղում լինի, ածականը, եթե անհրաժեշտ է ստույգ գտնվի: Ուսանողական տարիները լավագույնն են մադու կյանքում: Օգտվեցեք այդ տարիներից այն լրջությամբ, որ անհրաժեշտ է ապագա մասնագիտության պաշարն ըստ ամենայնի ձեռք բերելու և միտքը կրթելու համար: Պարապեցեք այնպես և այնքան, որ ձեր գլուխը ցավի: Գրադարանում մնացեք այնքան, որ գրադարանի աշխատողները դուրս հանեն ձեզ: Այգիներում շատ եղեք, երկնքի տակ: Նայեցեք ներկայացումներ, թանգարաններ գնացեք, եղեք համերգներին և կնկատեք, թե ինչպես կթարմանաք և կնորոգվեք մտքով ու հոգով: Մի սահմանափակեք ձեզ միայն գրականությամբ: Գրականությունը խորապես հասկանալու և զգալու համար երբեմն արվեստի այլ ճյուղերի՝ երաժշտության, նկարչության, թատրոնի իմացությունն օգնում է: Թատրոնը գեղարվեստական ներգործության հզոր ուժ է, դա կախարդական արվեստ է: Էդիլյանը սաներին խորհուրդ էր տալիս՝ ինչով էլ զբաղվեն, մանկավարժությամբ թե գիտությամբ, գրող դառնան թե պաշտոնյա, բոլոր դեպքերում ապրեն քաղաքացիական շահագրգռություններով: Խորհուրդ էր տալիս բազմակողմանի հետաքրքրություններ ունենալ՝ գավառացի չմնալու համար, բայց և զբաղվել միայն մի գործով, չցրվել, մտավոր ուժերը չջլատել. կենտրոնացումը մեծ ուժ է, ով դրան հասնի, արդյունավոր կյանք կունենա: «Երկար ու գեղեցիկ խոսեց կամքի մասին: Եվ խոսեց այնպես, որ մեզանից ամեն մեկը հավատաց իր ուժերին, իր ապագային: Ասում էր, որ կամք ունեցողը հաղթահարում է անասելի դժվարություններ: Եվ բերում էր Դեմոսթենեսի օրինակը, թե ինչպես կակազը դարձավ մեծահռչակ հռետոր»,- գրում է Զարյանը:

Առողջ սերունդ մեծացնելու համար վիթխարի մանկավարժական փորձ կուտակած մտավորականը ուսուցիչներին առաջադրում էր հետևյալ պահանջները՝ աշակերտը պետք է նստի ազատ, ուղիղ, անկաշկանդ, կուրծքը չպետք է հենի սեղանին, երկու ոտքերը չպետք է իրար վրա դնի կամ կպցնի իրար, չպետք է շարժի, ոտքերի թաթերը պետք է դնի ոչ թե հատակին, այլ գրասեղանի հենակին, երկու ոտքերը պետք է ունենան հավասար բարձրություն, ողնաշարը պետք է ուղիղ պահի, չպետք է ծռի կամ ծռմռի, սրունքները պետք է լինեն նստարանի տախտակին ուղղահայաց, գլուխը չպետք է թեքի աջ կամ ձախ, այլ պահի հանգիստ և ուղիղ, աչքերը գրքից կամ տետրից պետք է բարձր կամ հեռու պահի 25-30 սմ, արտագրության բնագիրը կամ նկարի օրինակը պետք է լինի ոչ թե տետրի կողքին, այլ դիմացը: Վաստակաշատ մանկավարժը մեծ տեղ էր տալիս երեխայի խաղին և աշխատանքային դաստիարակությանն ու պոլիտեխնիկական կրթությանը:

Գուրգեն Էդիլյանը գրել է նաև գեղագիտությանը, գրականությանն ու արվեստին վերաբերող բազմաթիվ աշխատություններ ու արժեքավոր հոդվածներ («Շանթի «Հին Աստվածներ»», «Պետրոս Դուրյանի սիրո պոեզիան», «Լեոնարդո դա Վինչի», «Խաչատուր Աբովյանի կյանքն ու գործունեությունը» և այլն), դրանց մեծ մասը ձեռագիր վիճակում է: Ուսումնասիրել է նաև ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, զբաղվել հայկական տառատեսակների և դրանց դյուրընթեռնելիության հարցերով: Մեծ հայորդու գիտական աշխատությունների թիվն անցնում է 100-ից, որոնցից ավելի քան 30-ը ստվարածավալ մենագրություններ ու դասագրքեր են: Նրա «Փայլուն արև» այբբենարան-ընթերցարանը 1935 թ. արժանացել է ՀԽՍՀ լուսավորության մինիստրության առաջին աստիճանի մրցանակի, իսկ անվանի մանկավարժներ Սիմակի ու Մ. Դուրգարյանի հեղինակակցությամբ II, III և IV դասարանների համար պատրաստած դասագրքերը տարիներ շարունակ գործածվել են հայկական դպրոցներում: Վաստակաշատ գիտնականն աշխատակցում էր նաև Մոսկվայի հոգեբանության գիտահետազոտական ինստիտուտին՝ արժանանալով խոշոր հոգեբան, պրոֆեսոր Վ. Ա. Արտյոմովի բարձր գնահատականին: Էդիլյանը Հայաստանում հիմնադրել է փորձարարական հոգեբանության առաջին գիտական լաբորատորիան:

Ցավոք, 37-ի ստալինյան բռնությունները չշրջանցեցին այս լուսավոր մարդուն. հայ մեծ մանկավարժն ու հոգեբանը աքսորվեց Սիբիր: Աքսորում եղած 4 տարներին գրեց մոտ 35 մեծարժեք աշխատություններ՝ «Դատական հոգեբանություն», «Կամքի հոգեբանություն», «Ուսուցման արվեստը», «Խաչատուր Աբովյանի կյանքն ու գործունեությունը» և այլն: Դրանց մի մասը կորել է, մյուս մասը պահվում է ընտանեկան արխիվում, մի շարք գործեր էլ՝ բավական թվով նամակների հետ, գտնվում են ազգականների մոտ: Հայ մանկավարժության երևելիներից մեկը մահկանցուն կնքեց 1942 թ. աքսորավայրում՝ Օմսկում: Ավելի քան մեկ տասնամյակ անց ողջ գիտակցական կյանքը սեփական ժողովրդին նվիրած մտավորականը իր նման բազմաթիվ անմեղ դատապարտվածների հետ արդարացվեց՝ վերականգնելով բարի անունն ու համբավը:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Լույս է տեսել Հրանտ Առաքելյանի «Империя перешла в наступление» մենագրությունը

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հրանտ Առաքելյանի «Империя перешла в наступление» («Կայսրությունն անցել է հարձակման») մենագրությունը: Գիրքը հրատարակվել է Մոսկվայի «Университетская книга» հրատարակչությունում: Գրքում վերլուծված են պայմանականորեն «Կայսրություն» (կենտրոնը՝ ԱՄՆ) կոչվող գերտերությունների երկրաքաղաքական շահերը: Աշխատության մեջ ներկայացված են 2014-2015 թթ. ժամանակաշրջանի տնտեսական, ռազմաքաղաքական, դեմոգրաֆիական և այլ վիճակագրական տվյալներ: Գրքի բաժինների անվանումներից իսկ երևում են հեղինակի պատկերացումներն այդ պատմական ֆենոմենի մասին, կայսերական էլիտայի մտադրությունները, նպատակները, առաջնահերթությունները, խնդիրների լուծմանը հասնելու միջոցները, «Կայսրության» գործունեության որոշ մութ և գաղտնի կողմերը, ներկայիս ճգնաժամի սկզբնաղբյուրները, սանկցիաների պատերազմը, ուժերի առկա վերաբաշխումը, արտաքին ճնշմանը դիմակայելու միջոցները, գունավոր հեղափոխությունների տեխնոլոգիաները:

Աշխատությունը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ԻՄ ԿՐԿՆԱԿԻ ԱՐԱՐԱՏԸ

➢1 Ատլանտիդան, որն այնքան երկար ժամանակ թաքնված է եղել մեր աչքերից: Եվ հենց այդ մարդկային մտքի և գործունեության Ատլանտիդայում էլ կարևոր և կենտրոնական տեղերից մեկը բաժին է ընկնում Հայաստանին: Ինչքան որ ես ավելի էի խորանում այդ հայկական Ատլանտիդայի մեջ, այնքան արագ էր սկսում բաբախել իմ սիրտը: Անկասկած, ուրախությունից: Այստեղ ես գտա մարդկային գործունեության և կոնստրուկտիվ բանականության այնպիսի խոշոր շերտավորումներ, որ շնչառությունս քիչ էր մնում կանգ առներ: Նույնիսկ ամենափորձված «հանքափորն» անգամ դժվարությամբ գլուխ կհաներ պատմության, գրչության, մտքի, պոեզիայի, ծեսերի, ճարտարապետության նման շերտերից և ընդհանրապես այն ամենից, որը մենք կոչում ենք «գեղեցիկ»: Այս բոլոր գյուտերը ոչնչով չեն զիջում այն բոլոր գեղեցիկին, ինչ տեսել եմ աշխարհի տարբեր վայրերում: Բացի այդ՝ պետք է ավելացնել, որ այդ բոլոր պատմական և մշակութային շերտերը տոգորված են յուրահատուկ, անկրկնելի, ազգային, զուտ հայկական երանգով: Այստեղ հայտնաբերում ես այնպիսի յուրօրինակ իրեր, որոնց ոչ մի ուրիշ տեղ երկրագնդի վրա չես հանդիպի, ասենք՝ խաչքարեր և կամ այլ ազգային մասունքներ: Այդ բոլորը հայկական ֆենոմենը է՛լ ավելի են բարձրացնում: Հայերը ոչ մի ընդհանուր բան չունեն մշակութային էպիգոնության հետ, նրանց համար միշտ էլ օտար է եղել ուրիշ մշակույթներին կրկնօրինակելը: Հայ ժողովուրդը ստեղծում է միայն բնագրեր: Նա ստեղծագործ ժողովուրդ է: Հայաստանը տարածվում է պատմության այնպիսի խորքերը, որոնք կարելի է համեմատել նույնիսկ Արարատի բարձրության հետ: Ինձ համար Հայաստանը կրկնակի Արարատ է: Մեկը գտնվում է պատմական անցյալի խորքերում, իսկ երկրորդը հասնում է մինչև աստղերը: Ահա թե ինչ է Հայաստանը: Խոշոր, ես կասեի, հոյակերտ Զանգված, քաղաքակրթության վիթխարի բեկոր:

Ինձ դյութել է և՛ այն Արարատը, որը ես տեսել եմ Հայոց պատմության խորխորատներում, և՛ մյուս Արարատը, որը հայտնվել է ինձ՝ աստղերով զարդարված: Ե՛վ այնտեղ՝ ընդերկրյա Արարատում, և՛ այստեղ՝ վերերկրյա Արարատի վրա, այնքան աստղեր կան, որ հռչակավոր Բյուրականն անգամ անզոր է նրանց հաշվարկել: Հայկական հին և նոր մշակույթն ամբողջությամբ բովանդակ մի տիեզերք է: Իսկ այդ մշակույթի ստեղծողները տարբեր մեծության աստղեր են: Եվ ամենակարևորն այն է, որ նրանք անհամար են: Ու բոլորն էլ պայծառ փայլփլում են և լույս տալիս հայ ժողովրդին, քանզի տիեզերքում չկան հանգած աստղեր: Ես սիրեցի այդ խորունկ և վերգետնյա Արարատները: Ամեն ինչ, ինչպես տեսնում եք, սկսվեց մեկ բանաստեղծական տողից, իսկ ավարտվում է այնքան էլ ոչ սովորական ճանապարհորդություններով՝ դեպի նշված կրկնակի Արարատը: Ե՛վ դեպի ներքև, և՛ դեպի վերև: Ես ճանաչեցի հայկական իրականությունը, նրա ներկան, դյութիչ բնապատկերները, նրա մարդկանց և, իհարկե, հայկական գինու արևաբույր ու զարմանահրաշ համը: Պոեզիային դա էլ է պետք: Ինձ հմայել է նրա հերոսական անցյալը, խոր հուզմունք է առաջ բերել մեծաշունչ պատմության ողբերգական էջը: Ես այն համեմատել եմ իմ ժողովրդի դառը անցյալի հետ և ընդհանուր շատ բան եմ գտել նրանց մեջ: Դժվար է եղել փոքր ժողովուրդների գոյատևումը պատմության խաչմերուկներում: Ինձ դուր է գալիս հայ ժողովրդի պատմական լավատեսությունը, աշխատասիրությունը և մարդկանց համառությունը: Նման բնավորություն այստեղ ձեռք է բերվել այնպիսի պայմաններում, երբ մարդը ստիպված էր լինում մի կաթիլ ջուր աղերսել Աստծուց՝ ինչպես երկնային մանանա, և որտեղ հացն անգամ ստիպված էին լինում քարից քամել: Եվ, այնուհանդերձ, անտեսելով ամեն մի դժվարություն՝ մարդիկ այստեղ ուրախ ու զվարթ են՝ ինչպես հավքերը գարնանը: Ինչ կենսախինդ են այստեղ պարերը, ինչքան ուրախ են շուրջպարերը, ինչքան բարձրահունչ են երգերը: Ուղղակի հրաշք: Հայկական սրտերը բաց են: Ես նույնիսկ կասեի՝ լայնորեն բացված են: Այստեղ շատ դյուրին է մարդկանց հետ շփումը: Այդ իսկ պատճառով ես շատ կարճ ժամանակում այստեղ այդքան շատ ծանոթներ գտա, որոնք դարձան իմ հարազատները: Ես այստեղ գտա իմ երկրորդ տունը: Դրանից ավելին ինձ կյանքում հարկավոր չէ: Այժմ ես ավելի եմ խորացնում իմ իմացությունը այս կրկնակի Արարատի վերաբերյալ: Չափազանց դժվար է միանգամից ընդգրկել նման խոշոր զանգվածը: Անհրաժեշտ է ժամանակ: Իսկ ինձ քիչ է մնացել: Ես արդեն մուտք եմ գործում իմ կյանքի սպիտակ, ձմեռվա նման ժամանակահատվածը: Բայց դեռ շատ բան ունեմ անելու: Այդ իսկ պատճառով շտապում եմ: Ինձ օգնում են արժեքավոր և բարի գրքերը, որոնք բավական շատ են իմ ալքիմիկոսի լաբորատորիայում: Օգնում են լավ բարեկամներս: Վերջապես, իմ ուղևորությունները Հայաստան, հանդիպումները նրա մարդկանց հետ: Եվ ես ամեն օր վերադառնում եմ այն պոեզիային, որից հենց սկսվեց իմ ծանոթությունը Հայաստանի հետ: Եվ սեփական աշխատասենյակիս խաղաղության մեջ ես համառորեն լուծում եմ հայկական հանելուկը:

Հայաստանի հետ շփումը ինձ համար ավելին է, քան բարեկամությունը: Դա իմ ուշացած սերն է, սակայն մի տարբերությամբ, այն ծնունդ էր առել դեռ վաղուց՝ իմ ծաղկող երիտասարդության տարիներից: Այդ իսկ պատճառով էլ այն այդքան ուժեղ է՝ ինչպես և առաջին սերը:

«ԱՐԱՀԵՏ»

Երաժշտությունը և մարդու առողջությունը

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆ Է ԱՅՆ ՔԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ, ՈՐ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ Է ՈՒՂԵՂԻ ՈՂՋ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

Երաժշտությունը բուժում է

Այն ունի ցավազրկող հատկություն և օգնում է ցավի վերահսկմանը: Երաժշտությունն ունի քրոնիկ և հետվիրահատական ցավերը նվազեցնելու հատկություն: Երաժշտության բարերար ազդեցությունը առանձնապես մեծ է օստեոարտրիտի, մեջքի դիսկի խախտումների հետ կապված ցավերի դեպքում՝ նվազեցնելով դրանք մոտ 21 տոկոսով: Ըստ բրիտանական հետազոտողների (Journal of Advanced Nursing)՝ երաժշտությունը կարող է նպաստել անգամ անկումային տրամադրության (դեպրեսիա) նվազեցմանը (մինչև 25 տոկոս):

Վերջին տարիներին մի շարք հիվանդանոցներում շատ մեծ տեղ են տալիս երաժշական թերապիային: Այն արդյունավետորեն կիրառվում է հատկապես ծննդաբերության հետ կապված ցավերի, ինչպես նաև հետվիրահատական ցավերի նվազեցման համար՝ ավելորդ դեղորայքից խուսափելու նպատակով: Նշված թերապիան կիրառում են անգամ վիրահատության ժամանակ՝ անզգայացման նպատակով:

Երաժշտությունը լավ է սրտի աշխատանքի համար

Երաժշտությունը լավ է ձեր սրտի համար: Իտալացի և բրիտանացի մասնագետների կարծիքով՝ ավելի շուտ երաժշտության տեմպն է կարևոր, այլ ոչ թե երաժշտության ոճը կամ տեսակը: Նրանք այս եզրահանգմանն են հանգել փորձերից մեկի ժամանակ: Հետազոտվող խմբի մասնակիցները ականջակալներով լսել են 6 տարբեր ոճերի երաժշտություն, այդ թվում՝ ռեպ և դասական երաժշտություն՝ երբեմն-երբեմն դադար առնելով մոտ 2 րոպե: Աշխույժ երաժշտություն լսելիս, երբ նրանք սկսել են երաժշտության ազդեցության տակ ռիթմիկ շարժումներ անել, մասնակիցների մոտ նկատվել է սրտի ռիթմի և շնչառության արագացում, ինչպես նաև արյան ճնշման բարձրացում, իսկ երաժշտության ռիթմի դանդաղեցման ժամանակ նկատվել է սրտի աշխատանքի և շնչառության դանդաղեցում: Զարմանալին այն է, որ երաժշտական դադարի դեպքում (ռիթմիկ երաժշտություն լսելիս) կանոնավորվել են շնչառությունն ու սրտի աշխատանքը: Պարզվել է, որ անկախ այն հանգամանքից՝ մասնակիցներին դուր է գալիս երաժշտությունը, թե՝ ոչ, երաժշտություն ունկնդրողները գտնվում են երաժշտության ռիթմի ազդեցության տակ: Ուրեմն, դանդաղ և հանգիստ երաժշտությունը բարերար ազդեցություն ունի մեր սրտի աշխատանքի վրա: Այդ առումով անգնահատելի է դասական երաժշտության դերը:

Երաժշտությունն իջեցնում է արյան բարձր ճնշումը

Առավոտյան և երեկոյան դանդաղ ու հանգիստ երաժշտություն լսելով արյան բարձր ճնշում ունեցող անձինք կարող են իջեցնել արյան բարձ ճնշումը և այն պահպանել ողջ օրվա ընթացքում: Ըստ ամերիկյան հետազոտողների (American Society of Hypertension, New Orlean)՝ օրական մոտ 30 րոպե տևողությամբ լսելով դասական կամ կելտական երաժշտություն՝ արյան բարձր ճնշումը զգալիորեն նվազում է:

Երաժշտությունն արագացնում է կաթվածով հիվանդների վերականգնման գործընթացը

Սիրելի կամ հաճելի պոպ, դասական կամ ջազային երաժշտության ամենօրյա չափաբաժինը կարող է արագացնել կաթվածով հիվանդների առողջության վերականգնման գործընթացը: Ֆինն հետազոտողների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ եթե կաթվածով հիվանդն ամեն օր մոտ երկու ժամ ունկնդրի համապատասխան երաժշտություն, ապա նրա առողջացման գործընթացը զգալիորեն կարագանա՝ վերականգնելով հիշողությունը և կենտրոնացման ու մի շարք վարքագծային ունակություններ, կվերականգնվի ուղեղի նյարդաանատոմիական գործունեությունը: Այս նույնը չենք կարող ասել այն հիվանդների մասին, որոնք չեն ստանում երաժշտական խթանիչ:

Երաժշտությունը նպաստում է օրգանիզմի դիմադրողականության բարձրացմանը

Գիտնականներն այն կարծիքին են, որ երաժշտության մի որոշակի տեսակը կարող է հանգեցնել իմունային համակարգը խթանող հորմոնների սեկրեցիային: Վերջինս հիմնական պատասխանատուն է հիվանդություններ առաջացնող գործոնների նվազեցման համար: Երաժշտություն ունկնդրելը կամ երգելը, գիտնականների կարծիքով, զգալիորեն նվազեցնում է սթրեսածին կորտիզոլ հորմոնների մակարդակը: Կորտիզոլ կոչվող հորմոնների բարձր մակարդակի դեպքում նվազում է իմունային համակարգի պաշտպանիչ հատկությունը:

Երաժշտության մասին դարեր շարունակ լեգենդներ են հյուսվել: Այն ոչ միայն վերականգնում է առողջությունը, այլև ունի հոգին մաքրագործելու և վերածնելու մեծ ուժ: Նրա բուժիչ հատկությունների մասին կարելի է խոսել անվերջ: Այն մարդկանց ուղեկիցն է եղել կյանքի տարբեր պարագաներում՝ և՛ ուրախության և՛ տխրության պահերին: Երաժշտությունն իր մեջ պարունակում է խորհրդավոր և անբացատրելի մի ուժ: Ուրեմն, ավելի հաճախ լսենք հաճելի երաժշտություն և ճիշտ ընտրություն կատարենք երաժշտություն ունկնդրելիս, քանի որ դրական ազդեցության հետ մեկտեղ, այն կարող է պատճառել մեծ վնաս, անգամ բացասաբար ազդելով մեր մտածելակերպի, ներաշխարհի և աշխարհընկալման վրա:

Նյութը պատրաստեց՝Դասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

ՄԵՐՆ ՈՒՐԻՇ Է

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՄԵՆԹԱԼԻՏԵՏ

Ի՞նչ տարբերություն արևելյան և արևմտյան մենթալիտետների միջև: Այս հարցի պատասխանը հրաշալի ներկայացրել է ամերիկյան «Ֆորբս» ամսագիրը:

Ավելի ճիշտ, «Ֆորբսը» տեղեկություններ է հրապարակել այն մասին, թե ինչպիսի ավտոմեքենաներ են նախընտրում աշխարհի ամենահարուստ գործարարները:

Որքան էլ տարօրինակ թվա, այսօրվա գերմիլիարդատերերը բավական համեստ մեքենաներ են վարում: Մասնավորապես, աշխարհի ամենահարուստ մարդը «Մայքրոսոֆթ» ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսը, որի կարողությունը այսօր գնահատվում է 50 միլիարդ դոլար, անձնական օգտագործման երկու ավտոմեքենա ունի՝ 1991 թ. թողարկման «Պորշե 911» և 1988 թ. «Պորշե 959»: Երկու ավտոմեքենաներն էլ համարվում են միջին կարգի և հասանելի են միջին կարողությունների տեր մարդկանց: Ի դեպ, «Պորշե 959»-ն է վարում «Մայքրոսոֆթի» մյուս հիմնադիրը՝ Փոլ Ալենը (22 մլրդ դոլար), որը նաև վարում է 18 տարվա «Մազդա պիկապ»: Իսկ «Մայքրոսոֆթի» մյուս հիմնադիր Սթիվեն Բալմերը՝ չնայած իր ունեցած 13,6 մլրդ դոլարին, ընդամենը մեկ մեքենա ունի՝ 1981 թվականի «Լինքոլն Կոնտինենտալ»:

28 մլրդ դոլարի կարողություն ունեցող շվեդ գործարար Ինգվար Կամպրադը ընդամենը մեկ մեքենա ունի՝ «Վոլվո 240 GL» (1993 թ.): Դա ընդհանրապես ժողովրդական մեքենա է համարվում: Չնայած ինքը՝ Ինգվար Կամպրադը, հազվադեպ է իր մեքենան վարում, նա նախընտրում է աշխատանքի գնալ ավտոբուսով:

Սրանք՝ արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչներ են: Արևելյան մենթալիտետի ակնհայտ կրող է, օրինակ, Սաուդյան Արաբիայի թագավորի զարմիկ, արքայազն Ալվալիդ Բին Թալալ Ալ Սաուդը (20 մլրդ): Վերջինս այս պահին ունի «Ինֆինիտի FX 45», «Համմեր», «Վոլվո XC 90», «Ռոլլս-Ռոյս Ֆանտոմ» մակնիշի նորագույն ավտոմեքենաներ: Ընդ որում, արաբ արքայազնը յուրաքանչյուր նոր ավտոմեքենան երկու օրինակից է գնում: Մեկն ինքն է վարում, մյուսը թիկնապահը:

Ինչ վերաբերում է Հայաստանի մեծահարուստներին, ապա նրանք այսօր հաստատ նույնիսկ ուշադրություն չէին դարձնի Բիլ Գեյթսի կամ Ինգվար Կամպրադի մեքենաների վրա: Իրենց մեքենաները թե՛ կարգով, թե՛ գնով, թե՛ «պրեստիժի» մակարդակով «ծալած» ունեն Բ. Գեյթսի «Պորշեին»:

Սակայն, միջազգային հանրության ֆինանսական օգնություններով և բարեգործական նպաստներով ապրող Հայաստանի մի քանի մեծահարուստներ ոչ միայն իրենց կապիտալով, այլև աշխարհի ամենաթանկ ավտոմեքենաներով լրջորեն մրցակցում են ամենահարուստ երկրների միլիարդատերերի հետ:

Ի՞նչ արած, հայերը միշտ էլ աչքի են ընկել իրենց ծայրահեղություններով՝ մի բևեռում հարուստներ (ծայրահեղ), մյուսում՝ աղքատներ (ծայրահեղ)...

Իսկ մեր հարուստների «վարկը» չափվում է ավտոմեքենաների թանկությամբ:

Մի՞թե «положж» է, որ հարուստ լինի, իսկ մեքենան մի քանի տասնյակ կամ մի քանի հարյուր հազար դոլար չարժենա:

Ձրի թմրանյութ... ակնկալվող շահի համար

Ոստիկանության լեյտենանտ Խալո Կայզերը հերթապահությունից հետո փոխում էր համազգեստը և գնում տուն: Ճանապարհին նա պարտադիր մեկ գավաթ պաղպաղակ էր ուտում, որից հետո նրա տրամադրությունը բարձրանում էր: Եվ այսպես ամեն օր...

Շուտով ոստիկանության նրա գործընկերները սկսեցին տարօրինակություններ նկատել Կայզերի պահվածքում, առանց պատճառի նա հանկարծ սկսում էր ծիծաղել, զեկուցագիր գրելը ընդհատել և երգել: Մի անգամ էլ, երբ պետը դիտողություն արեց, Կայզերը լեզու ցույց տվեց նրան: Պետի հրամանով ոստիկանության բժիշկը սկսեց գաղտնի հետևել Կայզերին: Երկու օր հետո բժիշկը զեկուցեց, որ Կայզերը անընդհատ «կայֆի տակ է»:

Ոստիկանության թմրամոլ աշխատակից՝ սա արդեն խայտառակություն էր:

Պետը հրամայեց գաղտնի հետևել Կայզերի յուրաքանչյուր քայլին: Մի քանի օրից պետին զեկուցեցին, որ ոչինչ չեն նկատել, բացի նրանից, որ տան ճանապարհին նույն կրպակավաճառից Կայզերը միշտ պաղպաղակ է գնում և ուտում: Ուրեմն, եթե որևէ բան է տեղի ունենում Կայզերի հետ, ապա դա կապված է պաղպաղակի հետ:

Ոստիկանները որոշեցին զբաղվել պաղպաղակավաճառով: Գաղտնիքը շատ շուտով բացահայտվեց. պարզվեց, որ սույն անձնավորությունը պաղպաղակի յուրաքանչյուր բաժակի մեջ որոշ քանակի կոկաին է խառնում: Եվ երբ հաճախորդները կամաց-կամաց սովորում են թմրանյութին և այլևս առանց այդ բաժնի չեն կարողանում դիմանալ, պաղպաղակավաճառը նրանց առաջարկում էր թմրանյութ գնել: Բնականաբար, արդեն թմրամոլ դարձած հաճախորդները հոժարակամ համաձայնվում էին:

Պաղպաղակավաճառը հիմա բանտում է, իսկ ոչնչից անտեղյակ լեյտենանտ Կայզերը բուժվում է թմրակախվածությունից ազատվելու համար:

☺

- Ի՞նչ ես կարծում, ինչպես են կազմվում հորոսկոպները:

- Պողո՛ս, դու հորոսկոպով ի՞նչ ես:

- Կարիճ:

- Հրաշալի է: Ուրեմն, ըստ հորոսկոպի եկող շաբաթ Կարիճները անպայման պետք է փակեն պարտքերը, այլապես նրանց սպառնում են մեծ անախորժություններ:

☺

Մի շուն ամառանոցային հողակտորում բահով փորում է հողը: Հարևան շնիկը հմայված հայացքը չի կտրում նրանից: Շունը թողնում է փորելը և տխուր ասում է շնիկին.

- Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ես՝ հիմարս, սկսեցի հողաթափերը բերել տիրոջս:

☺

Ամուսինը կնոջ համար գնում է ադամանդե շքեղ մի մատանի:

- Բայց, որքան ես հիշում եմ, նա քեզ խնդրել էր նվիրել «ՋԻՓ» ավտոմեքենա,- կշտամբեց ընկերը:

- Իհարկե, ուզում էր: Իսկ ես որտեղի՞ց ճարեի կեղծված «ՋԻՓ»:

☺

- Մեծարգո պարոն Օբամա, խնդրում եմ Ձեզ իմ զոքանչին՝ Փառանձեմ Անտաշյանին, մտցնել «Մագնիտսկու» ցուցակի մեջ, քանի որ զոքանչիս կողմից իմ ամուսնական, մարդու և քաղաքացու իրավունքները անխնա ոտնահարվում են:

☺

Շաբաթ օր է, առավոտյան ժամը 6-ը: Զնգում է հեռախոսը: Քնաթաթախ, չարացած օդեսացին վերցնում է հեռախոսափողը.

- Այո, լսում եմ:

- Ներեցեք, դա Իվանովների բնակարա՞ննն է:

- Ոչ, իհարկե, ոչ: Իսկ ի՞նչ են նրանք արել ձեզ:

☺

Հոգեբանները միշտ խորհուրդ են տալիս. եթե ինչ-որ մեկն անտանելիորեն զայրացնում է ձեզ, դանդաղ, հանգիստ պաուզաներով հաշվեք մինչև 10-ը և ամբողջ ուժով խփեք դիմացինի ճակատին: Հավատացնում ենք, դա ձեզ կհանգստացնի:

☺

Սարսափելի ոչինչ չկա, երբ քո վրա ծիծաղում են: Ավելի սարսափելի է, երբ քո վրա լաց են լինում:

☺

Տիկինն, զգալով, որ ուժասպառ է եղել, մտավ դեղատուն և գնեց ուժերը վերականգնող մի թանկ դեղատուփ: Տուփի վրա խոշոր՝ ընթեռնելի գրված էր. «Ուղեղի աշխատանքը խթանող հրաշալի միջոց»:

Գալով տուն, նա կարդաց դեղամիջոցի բաղադրությունը և բարկացած դիմեց ամուսնուն.

- Հասկանո՞ւմ ես, սա ընդամենը համեմի և ռեհանի խառնուրդ է: Իսկ ես, հիմարս, այդքան փող վճարեցի:

- Տեսնում ես, կնիկ ջան, դու արդեն խելոքացել ես:

☺

Դրախտ: Ադամը հարցնում է Աստծուն.

- Տեր իմ, Դու ես ստեղծել Եվային և լավ ես արել: Սակայն ինչո՞ւ ես դու նրան տվել այդպիսի գեղեցիկ աչքեր, հրաշալի մազեր և նման հմայիչ ու գերող մարմին:

- Այդ բոլորը նրա համար, որ դու նրան սիրես:

- Աստված իմ, բայց ինչո՞ւ դու նրան մեկ կաթիլ իսկ խելք չես տվել:

- Դա էլ, սիրելի Ադամ, որ նա էլ քեզ սիրի:

☺

Բժիշկը՝ հիվանդին:

- Եթե դու չթողնես խմելը, ապա շատ շուտով կգրկվես լարդից:

- Դուք, բժիշկներդ, միշտ էլ ստում եք: Ողորմելի շաղակրատներ եք բոլորդ և հայտնի փչաններ: Մի քանի ամիս առաջ հոգեբանդ ինձ ասաց, որ ես եթե չթողնեմ խմելը, ապա ստիպված կլինեմ հրաժեշտ տալ կնոջս: Բա ո՞ւր է արդյունքը, քեզ եմ հարցնում:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 26.01. 2016 թ.:
Տպաքանակը՝ 500: gitutyun@sci.am
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА